

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԴԱՊ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Դիլիջան
Մասնակցում էին

16 օգոստոսի 2016թ.
Ժամը 10⁰⁰

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ

Հանձնաժողովի անդամներ՝

Լ. Աբազյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան

Ռ. Ալիխանյան

կադաստրի վարման և մոնիթորինգի մասնագետ

Ռ. Հարությունյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահեստապետ-պարետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ

1. «ԴԱՊ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նիստի.

(Հ. Հարությունյան)

Հաշվի առնելով «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից գեոդեզիական-քարտեզագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԱՊ-ՊԸԾՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 11.08.2016թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Տեղանք» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետով սահմանված ժամետում ՀՀ ՖՆ ՏՏԵՆՁ վարչությունից 15.08.2016թ. դրական եզրակացություն է ստացվել: Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168Ն որոշման հավելված 1-ի 48-րդ կետի, «Տեղանք» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող: Սակայն բացակայում են հրավերով նախատեսված տեխնիկական միջոցների տեխնիկական անձնագրերի պատճենները:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 51-րդ կետը ծանուցել «Տեղանք» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

2.2 Հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Հարությունյան



Հանձնաժողովի անդամներ՝

Լ. Աբազյան



Ռ. Ալիխանյան



Ռ. Հարությունյան



Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան

